ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրագնդի հեռահար զոնդման բնագավառներում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով գեոդեզիայի, քարտեզագրության և հարակից գիտությունների ու տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության հետագա զարգացման փոխադարձ ձգտումից,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կիրագործեն Կողմերի համապատասխան կազմակերպությունները՝ հետևյալ ձևերով.

տեղագրական-գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների կատարում,

քարտեզների, ատլասների և տպագրական արտադրանքի այլ տեսակների հրատարակման պոլիգրաֆիական ծառայություններ,

աջակցություն կնքված պայմանագրերով /կոնտրակտներով/ այնպիսի նյութերի ձեռքբերմանը, որոնք անհրաժեշտ են գեոդեզիական և քարտեզագրական արտադրության համար,

տարածքների օդատիեզերական նկարահանումների կատարում և հեռահար զոնդման տվյալների փոխանակում,

երկրատեղեկատվական համակարգերի, կադաստրների, թվային և էլեկտրոնային քարտեզների տվյալների բանկերի ստեղծման մեթոդաբանության մշակում,

Կողմերի տարածքների աշխարհագրական օբյեկտների անվանումների, ճանապարհային ցանցի զարգացման և այլ տարրերի փոփոխությունների հետ կապված՝ աշխարհագրական քարտեզների բովանդակության նորացմանը և Կողմերի տարածքների աշխարհագրական ուսումնասիրվածությանը վերաբերող տեղեկության փոխանակում,

գիտատեխնիկական և արտադրական այլ տեղեկության փոխանակում,

փորձնակոնստրուկտորական աշխատանքների համատեղ կատարում,

տեղագրագեոդեզիական, քարտեզագրական կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների միջև աշխատանքի փորձի փոխանակում,

գեոդեզիայի և քարտեզագրության մասնագետների ուսուցում և ստաժավորում:

Այդ համագործակցության կոնկրետ նպատակները, խնդիրները և պայմանները կորոշվեն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գեոդեզիական և քարտեզագրական ծառայություններ կատարող կազմակերպությունների կողմից՝ համաձայնեցնելով պետական կառավարման համապատասխան մարմինների հետ:

Համագործակցության ծրագրերի իրականցման նպատակով Կողմերը միջոցներ են ձեռնարկում անհրաժեշտ հումքի, սարքավորումների, հանդերձանքի և պատրաստի արտադրանքի՝ պետական սահմանով հնարավորին չափ պարզեցված տեղափոխման համար՝ ենթագերատեսչական կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերին և Կողմերի՝ գործող ներքին օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածով նախատեսված ձևերով համագործակցություն և, մասնավորապես, տեղեկությունների փոխանակում իրականացնելիս Կողմերը փոխադարձաբար հաշվի կառնեն պետական անվտանգության շահերը՝ ելնելով գործող ներքին օրենսդրությունից, ինչպես նաև այդ հարցերի շուրջը երկկողմ և բազմակողմ պայմանավորվածություններից:

Հոդված 3

Կողմերը ձեռնպահ կմնան հրատարակվող քարտեզների վրա Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պետական սահմանների վերաբերյալ որևէ փոփոխություն մտցնելուց՝ մինչև այդ հարցի մասին համապատասխան միջազգային պայմանագրերի կնքումը:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը չի խոչընդոտի գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում Կողմերի մասնագիտացված շփումների այլ ձևերին, որոնք իրականացվում են

Կողմերի փոխհամաձայնությամբ, այդ թվում՝ փոխհատուցողական-առևտրային հիմքի վրա:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և կգործի հինգ տարվա ընթացքում: Այն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդող հնգամյա ժամկետներով, եթե Կողմերից ոչ մեկը հերթական ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1993 թվականի հոկտեմբերի 4-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ համազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 4-ից: